ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻ 26.12.2013Թ. ԹԻՎ 33/6-Լ ՈՐՈՇՄԱՄԲ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ «ԱՆԴԱՄԱՎՃԱՐՆԵՐԻ, ՄՈՒՏՔԻ ԵՎ ԱՅԼ ՎՃԱՐՆԵՐԻ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԿԱՐԳՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ՝ Պալատ)** խորհուրդը, մասնակցությամբ Պալատի խորհրդի նախագահ Արա Զոհրաբյանի, խորհրդի անդամներ՝ Կարապետ Աղաջանյանի, Հրանտ Անանյանի, Սեդրակ Ասատրյանի, Սիմոն Բաբայանի, Գայանե Դեմիրչյանի, Նելլի Հարությունյանի և Կարեն Սարդարյանի,

քննության առնելով Պալատի խորհրդի՝ 26.12.2013թ. թիվ 33/6-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված «Անդամավճարների, մուտքի և այլ վճարների վճարումների վերաբերյալ» կարգում **(այսուհետ՝ Կարգ)** փոփոխություններ և լրացումներ կատարելու հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

Հավակնորդների մուտքի վճարների, փաստաբանների անդամավճարների, փաստաբանի օգնականի վճարների վճարումների և անդամավճարի գծով արտոնությունների սահմանման հետ կապված հարաբերությունները կարգավորված են Պալատի խորհրդի 26.12.2013թ. թիվ 33/6-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված «Անդամավճարների, մուտքի և այլ վճարների վճարումների վերաբերյալ» կարգի (**այսուհետ նաև՝ Կարգ**) դրույթներով:

Սույն որոշմամբ Կարգում կատարվել են փոփոխություններ և լրացումներ, որոնք ուղղված են փաստաբանների նկատմամբ կիրառվող անդամավճարի արտոնությունների հստակեցմանը և ընթացակարգի պարզեցմանը, ինչպես նաև անդամավճարի պարտքի հիմքով կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ կարգավորումների, անդամավճարի պարտքի տարաժամկետման կարգավորումների հստակեցմանը: Ստորև առանձին կետերով ներկայացվում են նշված փոփոխությունների և լրացումների հիմնավորումները.

19 սեպտեմբերի 2019թ.
թիվ 17/16-Լ

* * *

1. <u>Փաստաբանների նկատմամբ կիրառվող անդամավճարի արտոնությունների վերաբերյալ փոփոխություններ և լրացումներ.</u>

Գործող Կարգի 13-րդ կետի համաձայն Պալատի նախագահի որոշմամբ անդամավճարի վճարումից կարող են ազատվել կին փաստաբանները՝

ա) հղիության երեսուն շաբաթից սկսած մինչև ծննդաբերությունը՝ համապատասխան բժշկական փաստաթուղթ ներկայացնելու դեպքում՝ լրիվ անդամավճարի մասով (անդամավճար չի վճարում).

բ) ծննդաբերությունից հետո մեկ տարի ժամանակով՝ երեխայի ծննդյան վկայականը ներկայացնելու դեպքում՝ լրիվ անդամավճարի մասով (անդամավճար չի վճարում).

գ) երեխայի մեկ տարեկանից մինչև երեք տարեկանը ժամանակով՝ երեխայի ծննդյան վկայականը ներկայացնելու դեպքում՝ անդամավճարի 3/5-րդ մասով (վճարում է անդամավճարի 2/5-րդ մասը):

Կարգի 13-րդ կետի «ա», «բ» և «գ» ենթակետերից բխում է, որ դրանցով նախատեսված արտոնությունները անդամավճարի գծով փաստաբանի նկատմամբ կիրառվող **արտոնությունների երեք ինքնուրույն տեսակներ են**, ուստի արտոնությունների նշված տեսակներից յուրաքանչյուրը փաստաբանի նկատմամբ կիրառելու համար փաստաբանի կողմից ներկայացվում է համապատասխան դիմում՝ <u>կցելով</u> փաստաբանի մոտ նշված արտոնությունից օգտվելու իրավունքի առկայության հանգամանքը հիմնավորող փաստաթուղթ:

Վերոնշյալ կարգավորումից ելնելով փաստաբանը Կարգով նախատեսված արտոնություններից օգտվելու համար սահմանված ժամկետում առնվազն երկու առանձին դիմում պետք է ներկայացնի:

Գործնականում լինում են դեպքեր, երբ փաստաբանները երեխայի խնամքի հիմքով մասնագիտական գործունեություն չիրականացնելու արդյունքում, մոռանալու հետևանքով, բաց են թողնում հաջորդ արտոնությունից օգտվելու մասին դիմում ներկայացնելու ժամկետը, ինչի հետևանքով համապատասխան դիմումի բացակայության հիմքով փաստաբանին արտոնություն չի տրամադրվում և փաստաբանի համար հաշվեգրվում է անդամավճար:

Մի քանի դեպքով (փաստացի այդ դեպքերը քիչ են) արձանագրվել են փաստաբանների դժգոհություններն առ այն, որ հղիության հիմքով անդամավճարից ազատված լինելու դեպքում, հետագայում փաստաբանին երեխայի ծննդյան հիմքով անդամավճարից ազատելու համար դիմում ներկայացնելու պարտականություն չպետք է սահմանվի և փաստաբանին ինքնաշխատ կերպով պետք է տրվի Կարգով սահմանված հաջորդ բոլոր հնարավոր արտոնությունները:

Հաշվի առնելով փաստաբանների դիրքորոշումները, ինչպես նաև նպատակ ունենալով ավելի պարզեցնել Կարգով նախատեսված անդամավճարի արտոնությունից օգտվելու գործընթացը՝ Պալատի խորհուրդը որոշել է Կարգի 13-րդ կետի գործող կարգավորումը փոփոխել և սահմանել, որ Կարգի 13-րդ կետի «ա» և/կամ «բ» ենթակետերում նշված արտոնություններից օգտվելու համար փաստաբանը պետք է <u>մեկ անգամ</u> ներկայացնի ստորագրված դիմում, որին պետք է կցված լինի՝ առնվազն երեսուն շաբաթական հղիության վերաբերյալ համապատասխան բժշկական փաստաթուղթ («ա» ենթակետում նշված

արտոնության դեպքում) կամ երեխայի ծննդյան փաստաթղթի պատճենը («բ» ենթակետում նշված արտոնության դեպքում):

Կատարվող փոփոխությունների արդյունքում կին փաստաբաններին տրվող արտոնությունների էությունը չի փոխվում, այլ առավել պարզեցվում է այդ արտոնություններից օգտվելու գործընթացը, քանի որ, ըստ էության, սահմանվում է «մեկ դիմումի» սկզբունք:

Գործող կարգի 14-րդ կետով Պալատի խորհրդի որոշմամբ անդամավճարի արտոնություն էր տրված երկարատև (մեկ տարուց ավել) հիվանդության մեջ գտնվող փաստաբանին և բացառիկ դեպքերում երկրորդ կարգի հաշմանդամին՝ անհատական մոտեցման սկզբունքով:

Սույն որոշմամբ փոփոխություններ են կատարվել նաև գործող Կարգի 14-րդ կետում և առավել հստակեցվել են Պալատի խորհրդի որոշմամբ տրվող արտոնությունները:

* * *

2. <u>Անդամավճարի պարտքի հիմքով կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ փոփոխություններ և լրացումներ.</u>

Կարգում փոփոխություն է կատարվել նաև անդամավճարի պարտքի հիմքով կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ կարգավորումներում:

Գործող կարգավորման համաձայն կարգապահական պատասխանատվության ենթակա չեն առաջին անգամ մինչև երեք ամսվա անդամավճար չվճարած փաստաբանները, եթե չորրորդ ամսում ամբողջությամբ վճարել են անդամավճարները:

Նշված կարգավորումը սահմանվել էր հաշվի առնելով Պալատի կողմից անդամավճարների գծով որդեգրած մեղմ քաղաքականությունը: Սակայն, երբեմն փաստաբանների կողմից Պալատի մեղմ քաղաքականությունը չարաշահվում է, ինչի հետևանքով որոշ փաստաբաններ չեն վճարում անդամավճարը՝ կուտակելով անդամավճարի զգալի պարտքեր: Որոշ փաստաբանների մոտ առաջանում է նաև անդամավճարի կուտակված պարտքը միանվագ կամ սեղմ ժամկետում մասնակի մարումներով (տարաժամկետ) վճարելու դժվարություններ:

Հատկանշական է, որ Պալատն անդամավճարը չվճարելու հիմքով կարգապահական վարույթի հարուցման մեղմ քաղաքականությունից ելնելով գործնականում կարգապահական վարույթ է հարուցել վեց և ավելի ամիսների պարտք ունեցող փաստաբանների նկատմամբ, առաջին հերթին նախապատվություն տալով այն փաստաբաններին, ովքեր շարունակաբար թույլ են տալիս անդամավճարի վճարման կետանց:

Կարգապահական վարույթ հարուցելուց առաջ Պալատի աշխատակազմն էլեկտրոնային փոստով կամ հեռախոսազանգով ծանուցում է փաստաբանին անդամավճարի պարտքի վերաբերյալ:

Լինում են դեպքեր, երբ փաստաբաններն առանց որևէ հիմնավոր պատճառի անդամավճար չեն վճարում, իսկ անդամավճարի պարտքի մասին ծանուցվելուց հետո ներկայացնում են դիմում անդամավճարի պարտքի գումարը տարաժամկետ կարգով վճարելու մասին:

Հաշվի առնելով անդամավճարի պարտքի տարաժամկետման հարցում միասնական չափանիշներ սահմանելու և հավասար մոտեցում ցուցաբերելու

անհրաժեշտությունը, Պալատի խորհուրդը գտնում է, որ մեկ տարվա անդամավճարի պարտքի տարաժամկետման յուրաքանչյուր դիմում պետք է քննարկվի Պալատի խորհրդի կողմից անհատական մոտեցման սկզբունքով՝ հաշվի առնելով անդամավճարի չվճարելու հիմքերի օբյեկտիվ գնահատումը: Պալատի խորհրդի համոզմամբ նման մոտեցումն արդարացված է, քանի որ կբացառի անդամավճարի պարտքն անհարկի կուտակելու և հետագայում տարաժամկետելու դեպքերը:

Կարգի փոփոխությունների արդյունքում սահմանվել է, որ փաստաբանի նկատմամբ բոլոր դեպքերում կարգապահական վարույթ է հարուցվում, եթե փաստաբանի անդամավճարի պարտքը գերազանցել է 60.000 (վաթսուն հազար) ՀՀ դրամը:

Հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ որոշ փաստաբաններ չեն վճարում անդամավճարը նույնիսկ մի քանի անգամ այդ հիմքով կարգապահական պատասխանատվության ենթարկվելուց հետո, Պալատի խորհրդը գտնում է, որ պետք է 60.000 (վաթսուն հազար) ՀՀ դրամը գերազանցող անդամավճարի պարտք ունեցող փաստաբանների դեմ որոշ դեպքերում դատական կարգով նշված պարտքի բռնագանձման գործընթաց սկսել:

Առաջարկվող վերոնշյալ լրացումներում նշվել է անդամավճարի 60.000 (վաթսուն հազար) ՀՀ դրամ պարտքը, քանի որ այն համապատասխանում է փաստաբանի կողմից մեկ տարվա համար վճարման ենթակա անդամավճարի գումարին:

* * *

3. <u>Այլ՝ տեխնիկական բնույթի փոփոխություններ և լրացումներ.</u>

Վերոնշյալ փոփոխություններից ու լրացումներից բացի Կարգում կատարվել են նաև այլ խմբագրական փոփոխություններ, օրինակ՝ հասկացությունների լրացում, ոչ լրիվ ամսվա համար անդամավճարի վճարման համար սահմանված օրերի հաշվարկում վրիպակի ուղղում և այլն:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դրանք տեխնիկական բնույթի խմբագրումներ են, ուստի սույն որոշմամբ դրանց համար առանձին հիմնավորում չի ներկայացվում:

Ամփոփելով վերոգրյալը և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 12-րդ և 15-րդ կետերի, ինչպես նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերի, 33-րդ հոդվածի 3-րդ մասի, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի, միաձայն

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. *Կարգի **3-րդ կետում՝***

*1.1. «գանձապահին» բառը փոխարինել **«դրամարկղ»** բառով:*

*1.2. «փոխանցմամբ» բառը փոխարինել **«կամ վճարային այլ համակարգով»** բառերով:*

*2. Կարգի **4-րդ կետը** լրացնել հետևյալ պարբերություններով.*

«- դիմում - փաստաբանի կամ փաստաբանի օգնականի կողմից սույն կարգով նախատեսված արտոնությունից օգտվելու կամ այլ հարցի համար Պալատին առձեռն, փոստային ծառայության կամ էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացված և դիմողի կողմից ստորագրված փաստաթուղթ, որում հստակ կերպով արտացոլվում է դիմողի պահանջը.

- շահառու փաստաբան - անդամավճարի արտոնությունից օգտվող փաստաբան.

- ծննդյան փաստաթուղթ - երեխայի անձնագիր կամ ծննդյան փաստը հաստատող այլ ապացույց:»:

*3. Կարգի **8-րդ կետում** «ամսվանից» բառը փոխարինել **«օրվանից»** բառով:*

*4. Կարգի **9-րդ կետի** վեցերորդ պարբերությունում «24» թիվը փոխարինել **«25»** թվով:*

*5. Կարգի **9.¹ կետը** լրացնել նոր՝ երկրորդ պարբերությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. **«Անդամավճարի «60.000 (վաթսուն հազար) ՀՀ դրամը գերազանցող պարտքի տարաժամկետ վճարման համաձայնագիրը Պալատի ֆինանսական տնօրենը կնքում է Պալատի խորհրդի համաձայնության դեպքում:»:***

*6. Կարգը լրացնել նոր **9.³ կետով**՝ հետևյալ բովանդակությամբ. **«Անդամավճարի «60.000 (վաթսուն հազար) ՀՀ դրամը գերազանցող պարտք ունեցող փաստաբանների դեմ կարող են նշված պարտքի գումարները դատական կարգով բռնագանձելու վերաբերյալ հայցադիմումներ կամ վճարման կարգադրության դիմումներ ներկայացվել Պալատի խորհրդի համաձայնությամբ: Անդամավճարի 60.000 (վաթսուն հազար) ՀՀ դրամը չգերազանցող պարտքի դեպքում, փաստաբանի դեմ պարտքի բռնագանձման հայցադիմում չի ներկայացվում:»:***

*7. Կարգի **13-րդ կետը** շարադրել հետևյալ խմբագրությամբ.*

«13. Պալատի նախագահի որոշմամբ անդամավճարի վճարումից լրիվ կամ մասնակի կարող է ազատվել կին փաստաբանը՝

ա) հղիության երեսուն շաբաթից սկսած մինչև երեխայի մեկ տարեկանը՝ անդամավճարի լրիվ մասով (անդամավճար չի վճարվում).

բ) երեխայի մեկ տարեկանից մինչև երեք տարեկանը՝ անդամավճարի 3/5-րդ մասով (վճարվում է անդամավճարի 2/5-րդ մասը):

Սույն կետի «ա» և/կամ «բ» ենթակետերում նշված արտոնություններից օգտվելու համար փաստաբանը պետք է մեկ անգամ ներկայացնի ստորագրված դիմում, որին պետք է կցված լինի՝ առնվազն երեսուն շաբաթական հղիության վերաբերյալ համապատասխան բժշկական փաստաթուղթ («ա» ենթակետում նշված արտոնության դեպքում) կամ երեխայի ծննդյան փաստաթղթի

պատճենը («բ» ենթակետում նշված արտոնության դեպքում): Փաստաբանի նկատմամբ կիրառվող անդամավճարի արտոնությունը տրամադրվում է դիմումի օրվանից հետո ընկած համապատասխան ժամանակահատվածի համար, եթե փաստաբանն անդամավճարի պարտք չունի:

Այն դեպքում, երբ փաստաբանը ներկայացրել է սույն կետի «ա» ենթակետում նշված արտոնությունից օգտվելու վերաբերյալ դիմումն, ապա փաստաբանի նկատմամբ այդ դիմումի հիման վրա կիրառվելու է նաև սույն կետի «բ» ենթակետում նշված արտոնությունն՝ առանց լրացուցիչ դիմումի, հետևյալ կարգով՝ երեխայի ծննդյան օրը համարվելու է հղիության 40-րդ շաբաթվա վերջին օրը՝ մինչև ծննդյան փաստաթղթի ստացման հիմքով վերահաշվարկը:

Շահառու փաստաբանը պարտավոր է երեխայի ծննդյան օրվանից սկսած երեք ամսվա ընթացքում Պալատին առձեռն, փոստով կամ էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել ծննդյան փաստաթղթի պատճենը: Սույն պարբերության մեջ նշված ժամկետում (հղիության 40 շաբաթ գումարած երեք ամիս) ծննդյան փաստաթուղթը չներկայացնելու դեպքում, փաստաբանի նկատմամբ կիրառված արտոնությունը Պալատի ֆինանսական տնօրենի կողմից դադարեցվում է: Արտոնությունը դադարեցնելուց հետո, փաստաբանի կողմից ծննդյան փաստաթղթի պատճենը ներկայացնելու դեպքում, արտոնությունը կարող է տրվել նոր դիմումի հիման վրա՝ դիմումին հաջորդող ժամանակահատվածի համար՝ դիմումի օրվա դրությամբ անդամավճարի պարտք չունենալու դեպքում:»:

*8. Կարգի **14-րդ կետը** շարադրել հետևյալ խմբագրությամբ.*

«14. Պալատի խորհրդի որոշմամբ փաստաբանին կարող է տրամադրվել հետևյալ արտոնությունը՝

ա) ծանր հիվանդություն ունեցող փաստաբանին՝ անդամավճարի պարտքի զիջում (ներում) և/կամ ամենամսյա անդամավճարից լրիվ մասով ազատում հիվանդության տևողության ժամանակահատվածով՝ դիմում և առողջական վիճակը հավաստող համապատասխան բժշկական փաստաթղթեր ներկայացնելու դեպքում.

բ) երկրորդ կարգի հաշմանդամին՝ մինչև հաշմանդամության փաստաթղթում նշված ժամկետի ավարտը՝ անդամավճարի 3/5-րդ մասով (վճարվում է անդամավճարի 2/5-րդ մասը)՝ դիմում և հաշմանդամության կարգը հաստատող փաստաթուղթ ներկայացնելու դեպքում:

Սույն կետի «բ» ենթակետում նշված դեպքում փաստաբանի նկատմամբ կիրառվող անդամավճարի արտոնությունը տրամադրվում է դիմումի օրվանից հետո ընկած համապատասխան ժամանակահատվածի համար, եթե փաստաբանն անդամավճարի պարտք չունի:»:

*9. Կարգի **16-րդ կետը** շարադրել հետևյալ խմբագրությամբ.*

«16. Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ կարող է հարուցվել, եթե անդամավճարի պարտքը գերազանցել է 15.000 (տասնհինգ հազար) ՀՀ դրամը, բացառությամբ այն դեպքի, երբ փաստաբանն առնվազն մեկ անգամ ենթարկվել է կարգապահական պատասխանատվության

անդամավճար չվճարելու հիմքով (այս պարագայում կարգապահական վարույթ կարող է հարուցվել հերթական անդամավճարը չվճարելու դեպքում):

Փաստաբանի նկատմամբ բոլոր դեպքերում կարգապահական վարույթ է հարուցվում, եթե փաստաբանի անդամավճարի պարտքը գերազանցել է 60.000 (վաթսուն հազար) ՀՀ դրամը:

Սույն կետը տարածվում է նաև փաստաբանների օգնականների նկատմամբ:»:

10. Կարգի 13-րդ կետի մասով սույն որոշմանը տալ հետադարձ ուժ և այն տարածել անդամավճարի արտոնությունից օգտվելու վերաբերյալ փաստաբանների կողմից 2016 թվականի հունվարի 1-ից հետո ներկայացված բոլոր դիմումների նկատմամբ՝ անկախ այն հանգամանքից, թե դիմումը նախկին կարգավորման անդամավճարի ո՞ր արտոնության համար է ներկայացվել:

2016 թվականի հունվարի 1-ից հետո մինչև Պալատի խորհրդի 19.09.2019թ. թիվ 17/16-Լ որոշման ուժի մեջ մտնելը արտոնությունից օգտվելու դիմում ներկայացրած փաստաբաններին՝ արտոնություն տրամադրելու կամ արտոնություն տրամադրելը մերժելու հետ կապված հարցերը վերանայվում են շահառու փաստաբանի դիմումի հիման վրա, որի արդյունքում կատարվում է փաստաբանների անդամավճարների վերահաշվարկ:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
խորհրդի նախագահ՝ Արա Զոհրաբյան

19 սեպտեմբերի 2019թ.
թիվ 17/16-Լ
ք. Երևան